իրերը։ Երբեմն էլ աղջիկները տնետուն ման գալով և ծաղիկների փնջեր բաժանելով, հավաքում էին այդ իրերը՝ վիճակին մասնակցել ցանկացողներից։ Փարչը տանում էին մի խաչի[53] մոտ, դնում էին մեջտեղ և շուրջը նստոտում։ Մեկը, որ կոչվում էր մէր՝ մայր[54], որն ավելի շատ երգեր գիտեր և ավելի սրամիտ էր համարվում, փարչը ծածկում էր որևէ կտորով և ասում էր վիճակի քառյակը, մյուսները կրկնում էին քառյակը և ապա մէրը հանում էր փարչի միջից, ծածկոցի տակից մի իր—երգը գուշակում էր հանված իրի տիրուհու բախտը։ Ծիսակատարությունը վերջանում էր նախորդ օրը մէժմճու վրա շարված մրգեղենի ընկերությամբ ուտելով։

Աստվածածնի տօն։ Այդ տոնին խաղողն էր օրհնվում և բոլոր այգեգործական գավառներում հանդիսավոր և բազմամարդ տոնակատարություն էր լինում, մինչ այդ տոնը խաղողը պաս էր և արգելվում էր ուտել։ Զանգեզուրում, որտեղ այգեգործությունը երկրորդական տեղ էր գրավում տեղական տնտեսության մեջ, այդ տոնն անցնում էր անշուք կերպով, եթե համեմատելու լինենք, օրինակ, Երևանի կամ Ագուլիսի հետ։ Զանգեզուրցիք բավականանում էին խաղողը եկեղեցում օրհնելով և իրար մեջ բաժանելով։

Սրփ խաչի տօն։ Զանգեզուրցին այդ օրը նշում էր միայն մերձավոր խաչերի այցելություններով։ Սիսիանի միայն մի քանի գյուղերում այդ տարի ննջեցյալ ունեցողները ուրբաթ օրը ոսպով շօրվա էին պատրաստում և բաժանում որպես հոգեբաժին։ Նույնպես այդ օրն օրհնել էին տալիս գերեզմանները[55]։ Շատ քիչ գյուղերում գերեզմաններն օրհնել տալուց հետո նստում էին ընդհանուր հասարակական ճաշկերույթի, ի մի հավաքելով տներից բերած կերակուրները։

Տարվա երկրորդ կիսամյակը Զանգեզուրումն էլ, ինչպես և Հայաստանի այլ վայրերում, առաջին կիսամյակի համեմատությամբ շատ աղքատ էր տոնակատարություններով։ Բերքը հավաքելուց հետո կարծես այլևս կարիքը վերանում էր մագիկ ծիսակատարություններով բնության ուժերի ընթացքին և զորությանը միջամտելու, ուղղություն տալու այդ ուժերի արթնացմանը, ծավալմանը և լիակատար ներգործմանը։

Այսպիսով, տեսնում ենք, որ ժողովրդական տոները ոչ թե լոկ ուրախության արտահայտություններ են եղել հնում, կամ լոկ վերհիշում այս կամ այն նշանավոր դեպքի, այլ մոգական միջոցառումներ, որոնցով մարդը խառնվում էր բնության կյանքին, ձգտում էր արթնացնել նրա մեջ այն կենդանարար ուժը, որն իրեն անհրաժեշտ էր իր տնտեսության համար։ Նա աշխատում էր առաջն առնել թե՛ բնության վնասարար, կործանարար ուժերի ազդեցության և թե՛ թշնամիների չար կախարդությունների։ Այս տոները միայն արտաքուստ զուգորդվեցին Քրիստոսի կյանքի մասին եկեղեցու կողմից կանոնացրած ավանդությունների հետ։ Նրանց մեջ ուժեղ շեշտված էր մեռնող և հարություն առնող աստվածության պաշտամունքը, որի աղբյուրն էր ոչ թե քրիստոնեական ուսմունքը, այլ Փոքր Ասիայի և առհասարակ Առաջավոր Ասիայի հնագույն աշխարհըմբռնումը։ Այս աշխարհըմբռնումը պարարտ հող է ծառայել քրիս-

---

[53] Գորիսում Նրճատակի կամ սրփ Մրտռիրիսի քարայրի։

[54] Վիճակ հանող այս աղջիկը պիտի լիներ այնպիսի ընտանիքից, որտեղ ծնողներն առաջին պսակի են, կենդանի և տան մեջ այդ տարին ննջեցյալ չի եղել։ Այդ տարին իրենց տանը ննջեցյալ ունեցած աղջիկը վիճակի համար իրը պիտի տար ոչ թե իրենց տնից, այլ ննջեցյալ չունեցած որևէ մեկ ուրիշի տնից փարչի մեջ ձգելու համար։

[55] Լալայեան Ե., Սիսիան, էջ 160։